Թէև հայերու հրացաններն քիչ էին, բայց իրենց դիրքը ապահով լինելուն վնաս շատ չը կրեցին, Ենի-Չերիներից բազմաթիւ մարդիկ ընկան։

Պատերազմ նոր սկսած էր, երբ Ահմէտ լուր յղեց այս այն կողմ, որ իւրեան յօգնութիւն հասնին։ Երեկոյին կը կազդուրուին, առաւօտեան պահուն կառնէ յօգնութիւն եկած զինեալներն ու բուռն յարձակում կը գործէ Ցուլթաղայ վերան։

Վերին Թաղեցիք մինչև կէս օր պատերազմելով կը տկարանան և անձնատուր կը լինին, ներքին Թաղեցիք ևս առանձին մնալով երկար չեն կարող դիմադրել, որով կըսկսի գիւղի կոտորածն, ծեր ու երեխայ ի սուր կը մաշեն, հարսներ ու աղջիկներ գերի կը տարուին, ստընմայրերու ծծերն կը կտրեն։

Այս միջոցներուն Պայազիտի, Ալաշկերտի և Անդաբի կիշխէր Մահմուտ փաշա· սա լսելով Ցուլթաղ գիւղի կոտորածն և աւերումը, խիստ կզայրանայ, իւր ատեանը բերել տուաւ բանտից Սիբիկանցոց Աւտալ աղան, որը ի մահ դատապարտուած էր։

—«Աւտալ աղա, ասաց նմա, դու յաւիտեան արձակուած ես և ազատուած եթէ Ցուլթախ հայ գիւղի վրէժն լուծես Ահմէտ աղայէն»։

Աւտալ աղան հաստատուն խոստումով կարձակուի և իւրեան բաւականաչափ զինեալներ պատրաստելով կը մեկնի յԱտադաղ։

Ճանապարհին կը խորհի, եթէ բազմութեամբ գնայ, Ահմէտ լսելով խոյս պիտի տայ, մի այլ հնարք կը գտնէ, իւր քանի մարդոցը կանանց հագուստ կը հագցնէ, որոց մին ևս իբրև հարս կը քողկէ, ինքն ևս հարսնևոր համարձակ խլաթ կը մտնէ· ուր կը բնակէր Ենի-Չերին։